

355(47.925)

4-18

*Հայաստանի Կարմիր բանակ*



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ

*Հայաստանի Կարմիր բանակ*

## 1920-1921

ՔԱԿԱՆՆԵՐԻ



ԵՐԵՎԱՆ

355 (47.925)

ԻՐԱՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

9(7)

2-18 Ա. Կ. ԿԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Հայաստանի  
ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ  
Հանրապետության  
Կոլեկտիվում

1920-1921 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

577



ԻՐԱՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԱՆ - 1930

Պատ. Խմբագիր՝ Դ. Ա. ԱՐՈՒՅԱՄԻԱՆ

Եփեմ Էմ

Հայաստանի սովետական կարգի  
հաստատման փառապանծ 40-ամյակին

ՀԵՂԵՆԻ

АРШАК ВАРДОВИЧ  
ВАРДАНИЯН

КРАСНАЯ АРМИЯ АРМЕНИИ  
В ГРАЖДАНСКОЙ ВОЙНЕ  
(1920—1921 гг.)

(На армянском языке)  
Издательство Ервандского университета  
Ереван—1969

Քաղաքացիական պատերազմի զարգաց իգութ չի անցնում ժողովուրդների համար: Այդ մի ծանր դրոշմ է, և ի տա իրականաբար ցուցնում է ԱՆՆՈՒՍՏՈՒՄԻՆԻՆ պատերազմում է իր մեջ կոնսոլիդացիայի հարստացումը, գաղափարական անկայունություններ, ինչպես նաև ինքնապաշտպանության հարցերի նկատմամբ և այլն: Սակայն մյուսը մեծ պեղումներ և խելի կոտորած մասնամասեր կատարել են մեծամեծ ժողովուրդների՝ այդ ժամանակից հետո մեծ խառնուրդով այդ դրոշմը սովորեցնում է ներքին պատերազմի և քաղաքացիական պատերազմի վաղա՛ր, սովորեցնում է հարցադրանքն այլուցիս...:

Վ. Ի. ԼԵՆԻՆ

## ԱՌՈՋԱՐԱՆԻ ՓՈՆՍՐԵՆ

Սովետական պատմաբանները խոշոր աշխատանք են կատարել Հայաստանի սովետական շրջանի պատմության գիտական մշակման բնագավառում: Վերջին տարիներում հրատարակվել են բազմաթիվ գրքեր, բրոշյուրներ և հոդվածներ: Մի շարք պատմաբանները դրադվել են քաղաքացիական կոիվների պատմության հարցերով և այդ ուղղությամբ կատարել են զրական աշխատանք:

Քաղաքացիական կոիվների պատմության ուսումնասիրությանն են նվիրված ու արժեքավոր են Ա. Բաղդասարյանի «Քաղաքացիական պատերազմը Հայաստանում», Ա. Հակոբյանի «Քաղաքացիական կոիվները Հայաստանում 1921 թվականին», Ս. Սողոմոնյանի «Քաղաքացիական կոիվները Չանգեզուրում» և արիշ աշխատություններ:

Ոչնչորսով են նաև քաղաքացիական կոիվների ակտիվ մասնակիցներ Գ. Օզանեզովի, Ե. Ամիրխանյանի և արիշների հուշերն ու հոդվածները:

Քաղաքացիական կոիվների մասին արիիվային հարուստ աղյուսներ կան Ա. Մնացականյանի «Посланицы Советской России в Армении» աշխատության մեջ:

Քաղաքացիական կոիվների պատմությունը, քաղաքական գեղերի բազմազանություն և ռազմական գործողությունների հազցվածություն տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում և դեռևս կարիք է զգում ուսումնասիրության: Միևի ալմ չի ուսումնասիրված 11-րդ Կարմիր Բանակի հետևական պաշարի պատմությունը Չանգեզուրում՝ 1920 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին:

Քաղաքացիական կոիվների պատմությունն ալևի հանգամանորեն և քստ էություն հասկանալու համար մեծ նշա-



նախօթյուն ունի Կարմիր Բանակի ազատագրական զորքի գիտական պարզաբանումը: Եթե հարցին մտենանք այդ անասկետից, ապա պետք է ասել, որ քաղաքացիական կոլիվների պատմությանը վերաբերող գիտական աշխատություններում հեղինակները այդ կողմի վրա անհրաժեշտ ուշադրություն չեն դարձրել: Պատմագրության կարևոր խնդիրն է ցույց տալ Կարմիր Բանակի ազատաբար գերը, պարզաբանել նրա Անկողնովկաս մտնելու պատճառը: Մինչև այժմ հրատարակի վրա չկա ոչ մի ուսումնասիրություն Հայաստանի Կարմիր Բանակի կազմակերպման, առանձին զորամասերի ձևավորման և նրանց անցած մարտական ուղու մասին:

Ներկա աշխատությունը նվիրված է Հայաստանում քաղաքացիական կոլիվներին և Կարմիր Բանակի զորամասերի համառոտ պատմությանը: Մեր նպատակն է ցույց տալ հայ ժողովրդի, Կարմիր Բանակի հայկական և առասպելական զորամասերի հերոսական պայքարը սովետական կարգերի հաստատման և ամրապնդման համար, ներկայացնել հայկական Կարմիր Բանակի կազմակերպման, առանձին զորամասերի ձևավորման ու նրանց հերոսական կոլիվների պատմությունը:

Աշխատության մեջ ցույց է տրված քաղաքական և զինվորական մի շարք զործիյների խոշոր դերը քաղաքացիական կոլիվներում: Լուսարանված է Սովետական Ռուսաստանի, նրա 11-րդ Կարմիր Բանակի կազմաբանման օգնությունը հայ ժողովրդին և հայկական Կարմիր Բանակին՝ քաղաքացիական կոլիվների ժամանակ:

«Հայաստանի Կարմիր Բանակի քաղաքացիական կոլիվներում (1920—1921 թթ.)» աշխատությունը գրելու համար օգտագործել ենք բազմաապիս արխիվային նյութեր: Գրքում բերված փաստական նյութի մեծ մասը վերցված է ՄՍՄՎ Կարմիր Բանակի Կենտրոնական պետական արխիվից և Հայաստանի արխիվներէց:

Յ. Ի. 60

Ք. Ե՛-ԼԵ՛Ն

## 1. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԿԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ

Հայ ժողովրդի արդարացի պայքարը ներքին և արտաքին հարստահարիչներին դեմ պայակվեց հաջողությամբ միայն ուսա ժողովրդի կազմաբանման օգնության և նրա հետ սերտ համագործակցությունից շնորհիվ:

Հայ ժողովրդը իր անկախության և ազատության համար գարեր շարունակ պայքարել է օտարերկրյա բազմաթիվ նվաճողների դեմ և երբեք չի խոնարհվել թշնամիների առաջ: Ընդհակառակը, շատ անգամ պայքարի մեջ մտնելով ավելի օժեղ պետությունների դեմ, ստրտության է մատնել նրանց:

Սրկար ժամանակ, Ի. Վ. Ստալինի արտահայտությունները, «Հայաստանի դավակները, իրենց հայրենիքի հերոսական պաշտպաններն անձնուրացությամբ պաշտպանում էին իրենց լեռներն ու կիրճերը թշնամիներից: Հայ և առա ժողովուրդները գարերի բննացյում եղել են բարեկամներ, նրանց եղբայրական կապերը շատ հին են: Ռուս մեծ ժողովուրդը միանգամայն զրական ազդեցություն է թողել հայ ժողովրդի վրա:

Հայ ժողովրդի պատմության մեջ կարևոր իրադարձություն էր Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, որով հայ ժողովրդի մի մասը փրկվեց պարսկա-թուրքական րոնակալների բնաքեղուժից և քնդմիշտ կապվեց ուսա ժողովրդի առաջադիմական կուլտուրայի և անտեսության հետ, որը բախտորոշ նշանակություն ունեցավ նրա հետագա զարգացման համար: Սակայն հայ ժողովուրդը մինչև սովետական կարգերի հաստատումը անխնա կիրառվ շահագործվում ու հայաձվում էր ցարիզմի զազուրթային ուժերի և գաշնակների կողմից:

1917 թվականի հոկտեմբերին Ռուսաստանում հաղթանակած սոցիալիստական ռեվյուցիան փրկարար նշանակություն ունեցավ բոլոր ժողովուրդների համար:

Անդրերկրյաի ժողովուրդները, ոգեշնչված Ռուսաստանի աշխատավորների պատմական հաղթանակով, 1917 թվականի վերջերին փորձեցին տապալել շահագործող դասակարգերին և հաստատել Սովետական իշխանություն: Այդ պայքարի ավանդարդում կանգնած էր Բարձրի Հերոսական սրբուհուտարիտար՝ Սա. Եանուսյանի, Ա. Զափարիձեի, Ի. Ֆիդեատովի, Մ. Ազիզբեկովի և օրինիների զինավարութայամբ: Հոկտեմբերյան ռեվյուցիայից հետո Բարձուն զարձավ ռեվյուցիայի միջնաբերդն Անդրերկրաստում: Նրա Հերոսական օրինակին հետևեցին Հայաստանի և Վրաստանի աշխատավորները:

Հայ ժողովրդի և Հայաստանի պատմության մեջ սևով են պատած այն էջերը, որոնք վերաբերում են դաշնակների երկու և կես տարվա (1918—1920 թթ.) տիրապետությանը: Հայաստանը փաստորեն զարձկ էր գաղթականության ու շրջափոխության երկիր, ժողովուրդը զանվում էր անտեսական և քաղաքական ծանր դրության մեջ: Երկրում սկսված սովի և դաժնազան հիվանդությունների պատճառով ժողովրդի զգալի մասը կոտորվում էր:

«Սուրն ու սովն էր թագավորում դաշնակների սկառավաբաձս երկրում»,— գրել է «Պրավդա»-ն 1940 թվականի նոյեմբերի 24-ի համարում: Նույնիսկ դաշնակցական «Աշխատանք» թերթը 1919 թվականին ստիպված էր խոստովանել, որ «Հայ ժողովրդի գրությունը կրքեր ալնջան հուսահատական լի եզրի, ինչպես այսօր» Հայաստանում համատարած մահն է թագավորում, սովն ընդգրկել է ամբողջ երկիրը... Միները, կատունները, շները, արագիլները զարձկ են բնակչության սովորական սնունդը: Սակայն սպառվել են նաև այդ վերջին միջոցները»:

Անկասկած է, որ եթև մի քանի տարի ևս շարունակվեր դաշնակների տիրապետությունը, այդպես հայ ժողովուրդը ֆիզիկապես կրնայնջվեր:

Հայ ժողովրդի համար ստեղծված այդ սոսկալի ծանր ժամանակաշրջանում միակ պարտխան, որ կարողացավ ճիշտ



11-րդ նստաբեր Բանակի մասերը, Երևան:

Պատ. Ա. Քեկուշյանի:



կիրպով արտահայտել և պաշտպանել աշխատավորների շահերը, բուշեիկյան պարտիան էր:

\* \* \*

Հայաստանի բանվորների և գյուղացիների ռեպուզիտն պայքարի պանծալի զրվագներից է հանդիսանում փառապանծ Մաշխյան ապստամբությունը: Աղեշնչված Սովետական Ռուսաստանի և Ազգրեշանի աշխատավորների հաղթանակով, հայ ժողովուրդը 1920 թվականի մայիսին զինված պայքար սկսեց դաշնակիների տնտրբատական զինտատուրայի դեմ: Մաշխյան ապստամբությունը արագությամբ տարածվեց Հայաստանի համարյա բոլոր քաղաքներում ու գյուղերում և վերածվեց զինված ապստամբության: Այն իր սուր ծայրով ուղղված էր անգլո-ֆրանս-ամերիկյան զազույթորարների դեմ: Այդ էր պատճառը, որ նրանք աժեն կերպ օգնում էին դաշնակիներին՝ ապստամբությունը արյան մեջ խեղզելու համար: «Մաշխյան ապստամբությունը Հայաստանի աշխատավորության ռեպուզիտն ցատուժի գազաթնակեան էր, որը փաստորեն փորեց դաշնակցության պարտիայի գերեզմանը և նրա վրա հիմք դրեց խորհրդային իշխանության»<sup>1</sup>:

Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները, սկսած 1920 թվականի ապրիլից, նախապատրաստական մեծ աշխատանք տարան մասսաների մեջ՝ մայիսիկյան խաղաղ ցույցերը զինված ապստամբության վերածելու և Սովետական իշխանություն հաստատելու համար:

Մայիսին աշխատավորները պայքարի ելան ինքնարուխ կերպով, որպեսզի առպալեն դաշնակցական կառավարությունը և հաստատեն Սովետական իշխանությունը:

Ապստամբությունը ավելի վճռական բնույթ ստացավ Այնթապի գրապուլում (այժմ՝ Էնիմալիտն), Ղազախ-Շամշադի-նում, Դիլիջանում, Նոր Քաջաղետում (այժմ՝ Կամո), Զանգեզուրում, Կարսում, Սարիղամիշում, իսկ Ղարաբիլիսայում (այժմ՝ Կիրովական), Կաղզվանում, Սուրմալում նախապարասովոդ ապստամբությունները ճնշվեցին նախօրոք:

Հայաստանի մի շարք շրջաններ (Ալեքսանդրապոլ, Իջե-

<sup>1</sup> Կարմիր սանդղաք, 1925 թ., № 11:

լան), որոնք սերտ կերպով կապված էին Անդրհովհասի արդյունաբերական կենտրոնների հետ, որտեղ և ավելի զարգացած էր բանվոր դասակարգը իր քաղաքական ինքնագիտակցությամբ, գործան ևնույնցիտն շարժման հիմնական օջախներ և օրինակ հանգրտան մյուս շրջաններին:

Ապստամբության ծավալման համար վճռական նշանակություն ունեցավ 11-րդ Կարմիր Բանակի մտերի գումկերը Հայաստանի սահմաններին:

Հայ ժողովուրդը անհամբերությամբ սպասում էր աշատար Կարմիր Բանակի զգույն, քանի որ, ինչպես իրավացի կերպով ասել է Ս. Մուսալիսյանը, ավյալ մոմենտին, 1920 թվականի մայիսին, հայ աշխատավորության փրկությունը միայն Մոսկուայի իշխանության մեջ էր և միակ ուժը, որ կարող էր փրկել նրան, ռուսական ևնույնցիտն պրոլետարիատն էր: Ապստամբությունն ավելի ուժեղ էր և ցնցեց զաշտանցական կառավարության հիմքերը Այկրանդրագույում, որտեղ երկաթուղային բանվորների ապստամբության հարեց նաև կառավարության զորքի ևնույնցիտն մասը, անզական կաշտգործ:

Ապստամբության ավանդորդում էին գտնվում Վարդան զորավարն զրահագնացող՝ Ս. Մուսալիսյանի ղեկավարությամբ, և հայկական ասպեին հենյալ գնդի ևնույնցիտն գինավորները (չեղազրոնի հրամանատար՝ Հ. Բաղդամյան):

Այկրանդրագույում ևնույնցիտն ղեկավորը սկսվեցին նրանով, որ գուեզը մայիսինկյան տանի օրը վճռահանպես անցավ Երկաթուղային բանվորների և ցուցաբարների կողմը: «Կաշտգործի այլ մասերին գնդի կողմից ուղղված հեղափոխական կոչը,— գրում էր Հ. Բաղդամյանը,— հեղափոխության կողմը քաշեց կաշտգործի համարյա րոլոր զորամասերին: Չինված կույրը անդի ունեցավ մայիսի 9-ին: Գնդին հրամայված էր հրետանային Երկու մարտկոցի հետ մայիսի 9-ի առավոտյան կովով գրավել քաղաքը: Իշխանության զրավման օրից մինչև ապստամբության մնչումը գունդն ամբողջ ժամանակ ժանր ու մարտական աշխատանք էր կատարում քաղաք իր ձեռքում պահելու համար»<sup>1</sup>:

Մայիսի 10-ին Հայաստանի Թագաւ-ևնույնցիտն կոմիտեն, որը ստեղծվել էր մայիսի 7-ին, Այկրանդրագույոյի, Կարմիր, Սարիզամիշի, Գիլիջանի, Քալվառուլի բուշեղիկյան կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդակցությամբ, հասուկ կոչով հուշակեց Մոսկուային իշխանության հաստատումը Այկրանդրագույ թաղաքում և ամբողջ Հայաստանում:

Մայիսին Գիլիջանի և Ղաղախ-Շամշադինի աշխատավորների ևնույնցիտն մուտը նույնպես ոտքի կանգնեց՝ Մոսկուային իշխանության հաստատման համար և հասավ լուրը հաշտությունների:

Մայիսի 13-ին այդ շրջանների բուշեղիկները աշխատավորների անտնից գիմեջին Բարս, 11-րդ բանակի հրամանատարությամբ և խնդրեցին նրա օգնությունը: Այդ գիմուսի մեջ ասված էր. «...Ղաղախի հայկական լեռնային մասում զաշտակցության իշխանությունը տապալված է և նրա տեղը հաստատված է Մոսկուային իշխանության Այկրանդրագույում, Կարսում, Սարիզամիշում նույնպես ապստամբության գրոշ է բարեբացված, ձերբակալվել են կառավարության ցաշտանյանները: Այժմ գիմում ենք Կարմիր Բանակին և խնդրում ենք ուղարկել մեղ նյութական և ուղղման օգնություն: Խնդրում ենք 11-րդ Կարմիր Բանակի շտաբին, որ Իշխանի թեկամի տրամադրության տակ գիմ մասնագիտ գինավորականեր՝ ղեկավարելու Ղաղախի ապստամբությունը, նրանց պահար զգալի և Ղաղախում»:

11-րդ Կարմիր Բանակի շտաբը, ընդատազ գնալով Հայ աշխատավորների գիմումին, ապստամբությունը կազմակերպելու և մաստանների մեկ ևնույնցիտն ակտիվ աշխատանքներ տանելու համար ղեկավարման մասնագետներ ուղարկեց: Բազմից Հայաստան գերադարձան բազմաթիվ ևնույնցիտն բանվորներ, կոմունիստներ: Մայիսի 14-ին Շամշադինի շրջանի Մոսկու, Կարմիր Աղբյուր, Նորաշեն, Գորթան, Ղուլախ, Գինարի, Քառուզ և Բերդ պրոլետարատեղի ունեցուս միտնգներ (Ա. Բերդբյանի ղեկավարությամբ), որտեղ աշխատավոր

<sup>1</sup> «Առաջին մասնական հեղափոխության շարժումները Հայաստանում», Նրեան, 1932, էջ 312:

<sup>1</sup> «Կարմիր գինավոր», 1927 թ., № 35:



գյուղացիութիւնն իր գալուցիքը հայտնեց տիրող կառավարութեան զեմ և պահանջեց երկրում Սովետական իշխանութիւն հաստատել: Միտինգներում փայլուն ճառերով հանդես եկաւ 11-րդ բանակի ներկայացուցիչ Սոկոլովսկին. նշելով Ռուսաստանի Կարմիր Քանակի ապամ ապամական խոշոր հաղթանակները բազաբացիական կոմիւնիստ օգտաճանկաւեներում, նա կոչ արեց Հայաստանի աշխուստավորներին՝ զօժ շղատնայ իմպերիալիզմի դործակալները գաշնակներին, շարունակել պայքարը նրանց դեմ: Իր կոչիքի վերջում Սոկոլովսկին հայտարարեց, որ Սովետական Ռուսաստանի Հերոսական բանակը եկել է կեղեքված գյուղացիներին զորս կորցրելու Անդրկովկասի ու Արևելքի միջազգային քաղաքացիական իմպերիալիստական շերտներին<sup>1</sup>:

Միտինգի վերջում բնօրինակը հետևյալ որոշումը. «Ի նկատի ունենալով այն հանդամաները, որ հայկական զորամասերը բերես գանձում են Ղազախի շրջանում և Ռուսաստանի Կոմունիստական պարտիայի հսկողութիւնն ներքո, բայց հրամանատարական կազմի բացակայութեան պատճառով շնկ կարող շարժումը ղեկավարել, օտար այնտեղ ուղարկել պատասխանատու աշխատողներ՝ Կոմիւնիստներին — հեծնազանգի կոմիսարի օգնական, Բուրիսին, Զանինին, Կարբաննիկովին, Պանկովին, Կարապետյանին և Սոկոլովսկին»<sup>2</sup>:

Փանի որ պատասխանութիւնն ետնի շրջանում պահանջվեց ավելի մեծ օգնութիւն, մայիսի 18-ին Հայաստանի Ռազմա-ակտիւցիոն կամիսեն պատվիրակութիւնն ուղարկեց Արատա-ֆա, որտեղ կանգնած էր 32-րդ ղեկավարին և օգնութիւն խրդ-րեց: Պատվիրակութեան կազմից 11-րդ բանակի շտաբին ներկայացված զիմումում սոված էր. «Լեկներն՝, սպորիի 28-ին, Կապիտն մեզ ուրախ լուր հաղորդեց Ազրբեջանի բնկերի և խաների հակահեղափոխական կառավարութեան անկման և մեն կոմունիստ ընկերների կողմից իշխանութեան գրավման մասին: Այդ ուրախալի լուրը տարածվեց ամբողջ Հայաստանում: Հայաստանի բանկորներն ու գյուղացիներն իմանալով այդ մասին, հրձվանքով իրենք են սկսեցին պատրաստվել

գաշնակ հակահեղափոխական կառավարութիւնը տապալելու համար և մայիսի 14-ին սպասամբութեան դրոշ վարդեցին:

Հայաստանն սպասում է Ռուսաստանի կարմիր մարտիկներին, և Հայաստանի սահմանը ստոր դնելու դիպում ոչ մի հայ ղեկավոր չի ցանկանա նրանց դիմավորել գնդակով<sup>3</sup>:

11-րդ բանակի շտաբի կարգադրութեամբ, մայիսի 20-ին Ազրբեջանից օուսական մի ջոկատ մտավ Քարվանսարաւ:

Կարմիր Բանակի մարտիկները երևալով Հայաստանի հողի վրա տալը բերեց մեծ ոգևորութիւն, մասսաների ցնծութեան մեջ էին: Գյուղացիները աչ ու հաջով, օւրախութեան արցունքն աչքերին բնօրնեցին Կարմիր Բանակի ջոկատին:

Մայիսի 19-ին Քարվանսարայի Ռեկոմը հռչակեց Սովետական իշխանութիւնը Այդ առթիվ Գ. Կ. Օրբոնիկեանն Վ. Բ. Լեկներին և Բ. Վ. Սաակիին ուղարկած հետազոտմ գրում էր.

«Բարկանսարայում մայիսի 21-ին հայտարարված է Սովետական իշխանութիւնը: Հայկական 6-րդ զնդի կանոնավոր զորամասերը անցան պատասխանների կողմը: Ռեկոմը ղեկել է մեզ օգնութեան, ենզորում եմ ձեր անմիջական ցուցումները»<sup>4</sup>:

Մայիսի 21-ին 11-րդ Կարմիր Բանակի օգնութեամբ սպասամբները իշխանութիւնն իրենց ձեռքը վերցրին Դիլիջանում: Բայց հաղթանակը կարճ տևեց: Այդ պատմական ժամանակաշրջանում Ռուսաստանի համար ստեղծված ներքին ժամանակաշրջանները ստիպեցին, որդեկող Կարմիր Բանակը կենտրոնանա՝ թշնամուն շարքային ու համար Կարմիր Բանակը շարքայացավ՝ անհրաժեշտ ազդեական օգնութեան ցուց տալ Հայաստանի աշխատավորներին Մայիսյան սպասամբութեան ժամանակ:

Մայիսյան սպասամբութեանը անվելի երկար և համաօրնոյթ ստացավ Զանգեզուրում: Զանգեզուրի գլավատում էին կենտրոնացել նեղեհի բռնկութեան ցուցանները, որոնք արշունալի գոտաստան կազմակերպեցին կոմունիստների և սպասամբութեանը հարած գյուղացիների նկատմամբ:

Զանգեզուրի աշխատավորների պայքարը գաշնակներ

<sup>1</sup> Տե՛ս «Կոմունիստ», 1929 թ., № 5.

<sup>2</sup> Նույն տեղը, № 4.

<sup>3</sup> ՍՍԳԳ կենսկոմԿԵ կից Մարտիզմ-լեկնիկզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 863, թ. 2.

<sup>4</sup> Նույն տեղը, ֆ. 32, գ. 2, թ. 2:

զմն զհեկալարեց Զանգեզուրի գավառային պարտիական կոմիտեան 1920 թվականի մայիսի սկզբներին այդ կոմիտեանի նախագահութեամբ հրավիրվեց խորհրդակցություն, որտեղ բննարկվեցին ընթացիկ մոմէնտը և այլ հարցեր: Խորհրդակցությունում քննարկեց գավառային կոմիտեան նոր կազմ՝ Հակոբ Կամարու նախագահութեամբ, որը ՌԿ(Բ)Պ Կովկասյան երկրային Կոմիտեան հանձնարարութեամբ զետ 1919 թվականին սկսույցիտն աշխատանքի համար տեղափոխվել էր Դարաբազ, այնուհետև Զանգեզուր:

Զանգեզուրի աշխատակիցների պաշտոնը իրենց գտակարգային կեղեքիներին զմն ավելի սուր բնույթ ստացավ 1920 թվականի մայիսի վերջերին՝ Խնձորեակի, Քարահունչի, Բնտկոթի, Շաղաթի և այլ գյուղերում: Հատկապես աչքի ընկան Խնձորեակի ապստամբ շոկաանները, որոնք Ռազմա-նեղույցիտն կոմիտեանի կողմից ստաշտարանք էին ստացել զաշնակներին թույլ շտալ մտնելու Խնձորեակի Առաջադրանքը կատարվեց ժամանակին և ճշտորեն: Կարմիր զորամասերի հուսկու հարվածների շնորհիվ Նոյեմբերի և Դրոյի զորամասերը նահանջեցին Դարաբազի:

1920 թվականի մայիսի կեսերին ապստամբության դրոշ պարզեցին Սիսիանի շրջանի աշխատակիցները՝ «Կարգի» զաշնակական կառավարությունը, «Կենցեղ» խորհրդային Աղբրեշանքը լուղունգներով: Մայիսի 24—25-ին Սիսիանում ստեղծվեց Ռազմա-նեղույցիտն կոմիտեան, որի կազմի մեջ ընդգրկեցին Քոփմաս Աղունքը, Հակոբ Գևորգյանը (Տախին), Միքայել Գեփորդյանը:

Մայիսի վերջերին Սիսիանի շրջանի ապստամբներից արդեն կազմակերպվել և զաշնակների զմն գործում էին մի քանի զինված շոկաաններ՝ անվտի կոմունիստ Նեղիա Բականգարյանի հրամանատարութեամբ:

Մայիսի 28-ին զինված ապստամբություն բռնկվեց Խնձորեակում: Ապստամբությունը հաջող ավարտելու համար Զանգեզուրի գավառային կոմիտեան հատուկ նամակով զիմեց Աղբրեշանում գտնվող 11-րդ թանկանի շտաբին, խնդրելով

«զեմբյուն»: Սակայն այդ ժամանակ բանակի թիկունքում Մովսեսական Աղբրեշանի կառավարության զմն սկսված մուսավաթական խռովությունների պատճառով Կարմիր Բանակի զորամասերը չկարողացան ակտիվ օգնություն ցույց տալ Զանգեզուրի ապստամբ զուղացիներին: Հենց դա էլ վճռեց ապստամբության ելքը Զանգեզուրի գավառում:

Մայիսի 27—28-ին զաշնակցական զինված բանախները Դրոյի հրամանատարութեամբ մտան Խնձորեակի Քիսիոնե Ռազմա-նեղույցիտն կոմիտեանի շոկաանները ուժեղ զիմազրութեան ցույց տվեցին թշնամուն, բայց ուժերը անհավասար էին, և վերջ է վերջը, ապստամբները թողեցին զուղու և հեռացան: Դաշնակ Դրոն իր շոկաաններով շուտացեց զեկի Սիսիան, ճնշեց այնտեղի ապստամբությունը և ստանջամահ արեց զուղացիներին, հատկապես ձերբակալված կոմունիստներին: Այսպես զազանաբար պատնեկեցին բուշեխի Ե. Բականգարյանը, Բ. Հարությունյանը, Ա. Մայրաբյանը, Ա. Զանունցը և ուրիշներ:

Անգլո-ամերիկյան խոյերիտիտանների օգնությամբ և աջակցությամբ զաշնակները զամանորեն ճնշեցին Մայիսյան ապստամբությունը: Հայաստանի բոլոր շրջաններում շատ զուճեր եղան:

Դաշնակները զեզակահարեցին ապստամբության անկուն զեկալայները, կոմունիզմի գործի համար մարտնչող անվիճեր մարտիկներ Սա. Ալավերդյանին, Ղ. Ղուկասյանին, Ս. Մուսայիլյանին, Բ. Ղարիբջանյանին, Հ. Սարոխանյանին, Ե. Միքաուսյանին, Ե. Սեյախին, Բ. Բաաիկյանին, Ա. Փանյանին, Վ. Անիսանին և շատ ուրիշներ:

Ճիշտ է, Մայիսյան ապստամբությունը ճնշվեց, բայց վիթխարի նշանակություն ունեցավ հայ ժողովրդի հետագա պայքարի համար: Ապստամբությունը հանգիստացավ ըստ թացիական կոիներին լավագույն դպրոց, որից շատ բան սովորեցին թե՛ կոմունիստները, թե՛ աշխատավորական լայն մասսաները: Ապստամբությունը արմատապես խախտեց զաշնակների սիրապետության հիմքերը: Մայիսյան ապստ-

<sup>1</sup> Տե՛ս Ա. Գ. Սոցոմոնյան, «Բազաբաշխական կոիները Զանգեզուրում», Երևան, 1938, էջ 38:

<sup>1</sup> Տե՛ս ՍՄԳՊ կենտրոնին կից Մարտի-մայիսի թնամբումի Զաչական թիկունքի արխիվ, Գ. 31, Գ. 1, Բ. 11:



տամբուսթյանը նորից հաստատեց այն ճշմարտութիւնը, որ հայ ժողովրդի շահերի միակ արտահայտիչը և լավագույն քարկամը բոլշևիկներն են, որ առանց Ռուսաստանի օգնութեան, հնարավոր չէ երկիրն ազատագրել օտարերկրյա զաղութարարներից և հաստատել Սովետական իշխանութիւնը:

11-րդ Կարմիր Բանակի փոքրամիջ զորամասերը (որոնք ապստամբների խնդրանքով եկել էին Քարվանսարա և Ղազախ-Շամշազին) մայիսի 22-ին, զիջերը ետ քաշվեցին Հայաստանի տերիտորիայից: Դա, իհարկե, ուներ իր օբյեկտիվ պատճառները:

Սովետական Ռուսաստանի ներքին ու միջազգային դրութիւնը հարկադրեց Անգրիովիտսի սահմաններում կանգնած 11-րդ բանակի զորամասերին՝ անցնել Հյուսիսային Կովկաս, (ենթրան ու Գանձակ (այժմ՝ Կիրովարսդ), ճաշել Սովետական իշխանութեան դեմ սկսված կոտորածայուցիւն խռովութեանները:

Անկասկած՝ եթե Կարմիր Բանակը կարողանար անհրաժեշտ ռազմական օգնութիւնը ցույց տալ հայ ժողովրդին, ապա 1920 թվականի մայիսին հնարավոր կլիներ Հայաստանում հաստատել Սովետական իշխանութիւն, որովհետև դրա համար կային բոլոր պայմանները:

Գաշնակները ապստամբութիւնը ճնշելուց հետո, շարունակեցին սեռորի քաղաքակախութիւնը՝ դատաստան տեսան ապստամբութեանը մասնակցած բանվորների, զլուղացիների, կոմունիստների նկատմամբ: Այդ բանը ավելի լիտի կերպով արտահայտվեց Զանգեզուրի գավառում:

11-րդ Կարմիր Բանակի հրամանատարութիւնը տեղիակ լինելով դաշնակցական դիմում բանդաների զազանութիւններին, հատկապէս Զանգեզուրի գավառի խաղաղ բնակչութեան և կոմունիստների նկատմամբ, 1920 թվականի հունիսի 29-ին հասուկ պատվիրակութիւն ուղարկեց՝ Ղարաբաղից զեպի Զանգեզուր, Տեղ գլուղը: Պատվիրակութեան առաջ խնդիր էր դրված՝ բանակցել դաշնակցական պարագլուխների հետ, որպէսզի նրանք վերջ տան քաղաքացիական կռիվներին և ճանաչեն Սովետական իշխանութիւնը Զանգեզուրում: Դաշ-



Մայիսի՝ Ս. Մ. Կիւրոյ, Գ. Կ. Ռոշնիիմև, Ա. Ի. Միխայր 11-րդ Կարմիր Բանակի մի խումբ հրամանատարների և բանակայինների նկա:

նակները ոչ միայն մերժեցին այդ առաջարկները, այլև գաղ-  
ազգոցի սպանեցին պատվիրակներին:

Նույն թվականի հունիսի 28-ին, ժամը 6-ին Կարմիր Բա-  
նակի շտաբը տեղեկություն ստացավ այն մասին, որ դաշնակե-  
ցական զորամասերի կողմից գրավվել են մի քանի գյուղեր<sup>1</sup>։  
Գաշնակների այդ ստոր բայլը չէր կարող չզարթոցնել  
11-րդ Կարմիր Բանակի հրամանատարությանը:

1920 թվականի հուլիսի 4-ին 11-րդ Կարմիր Բանակի  
252-րդ զունդը, ընդառաջելով Զանգեզուրի աշխատավորների  
խնդրանքին, շարժվեց դեպի Տեղ, զորս շարանը մտուղների-  
տական սճմակներին և զբավեց գյուղը: Կարմիր զորամասերը  
հետապնդելով նահանջող թշնաման, հուլիսի 5-ին ազատա-  
գրեցին Գորիսը: Հուլիսին ապստամբութան զրոշ բարձրաց-  
րին նաև Սիսիանի գյուղացիները, որոնք խնդրեցին 11-րդ  
բանակի շտաբին օգնելու իրենց:

Կարմիր Բանակը՝ ընդառաջելով ապստամբների պահան-  
ջին, հուլիսի սկզբներին շարժվեց դեպի Սիսիան և Ղափան:

Գաշնակցական զինված ուժերը, Կարմիր Բանակի հար-  
վածների շնորհիվ, բաժանվեցին երկու մասի և բռնեցին նա-  
հանջի ուղին՝ Գորիսից դեպի Սիսիան և Ղափան:

Հուլիսի 11-ին 11-րդ բանակի 252-րդ զունդը համառ  
մարտերից հետո ազատագրեց Ղափանի շրջանի մի շարք  
գյուղեր, այդ թվում և Վերին Նոտանանը:

Ղափանի գյուղացիությունը գրկաբաց ընդունեց Կար-  
միր Բանակի մարտիկներին, մեծ աջակցություն ցույց տվեց  
կռիվներում:

Գաշնակները ավելի լավ ծանոթ լինելով զավառի տեղա-  
կան պայմաններին, բոլոր միջոցները գործադրեցին հաղթա-  
նակ շահելու համար: Օգոստոսի 3-ին նեղելով Կարմիր Բանա-  
կի զորամասերին, դաշնակները նա զբավեցին Սիսիանը և Գո-  
րիսը: Կարմիր Բանակի զորամասերը ամրացան դեպի Գորիս  
աանող ճանապարհի վրա: Օգավելով թշնամու սխալ տակտի-  
կայից, Կարմիր Բանակի զորամասերը, ճիշտ կերպով հետա-  
խուղելով հակառակորդի դատավորությունը, օգոստոսի 6-ին  
անցան հարձակման և զբավեցին Գորիսը:

<sup>1</sup> Տե՛ս ԱՂԱԿԱ, փ. 196, օր. 7, ձ. 456, ձ. 115:



Նժդեհի ուժերը ետ շարժուցին զիսի Գարալազազ:

Այդ հաղթանակը խոշոր նշանակություն ունեցավ 11-րդ բանակի զորամասերի համար՝ Դա հնարավորություն ավելց 250-րդ և 251-րդ գնդերին 1920 թվականի սեպտեմբերի սկզբներին հարձակողական մարտեր ծավալելու Տաթև—Տան-ձավթը—հոտանան ուղղություններով:

Հաղառակորդը մեծ ուժեր էր կենտրոնացրել Կարմրաբար—Ինչարել հատվածում, Գավիթրիկ գյուղի շրջանում, սակայն Կարմիր Բանակի զորամասերը մեծ աջակցություն ստանալով բնակչությունից, հաղթահարեցին զիջարությունները և աղա-տազրեցին Լափան, Արծվանիկ, Լափնի, Սևբար, Բարաբա-թում գյուղերը՝ Նույն օրերին Կարմիր Բանակի մի այլ զորա-մաս, որ կոչվում էր Տաթև—Լափան հատվածում, աղտազրեց Վերին և Ներքին հոտանան, Առաջանոս և այլ գյուղեր:

Բազմաճակատի այս հատվածում աչքի բերկնող դեր խա-ղաց Զանգեզուրի կամուխատական ջոկատը, որի թիվը օրեցօր մեծանալով հասավ 150 հզորս Պարսիզանական այդ ջոկատը մեծ ծառայություն մատուցեց զավառում Սովետական իշխա-նություն հաստատելու գործում:

Լափանի աշխատավորները, ովերվելով 11-րդ Կարմիր Բանակի զորամասերի սրբազորություններից, իրենք նույն-պես ակտիվ պայքար ծավալեցին զաշխատական զինված բնիկաների դեմ: Գուշուկների դեմ մղված պայքարում մեծ է Ենիահող, Մավ, Սևբար գյուղերի կամբջիբների դերը, սրտեզ-առույտցիոն ակտիվ աշխատանք կատարեցին Բարվից վերա-գարձած կամուխատները: Գրանց թվում հիշատակվելան արժանի է Բ. Լարությունյանը, որը մինչև իր կյանքի վերջը հավատարմորեն ծառայեց աշխատավոր ժողովրդին և զոհ-վեց իրև անձեվեր կամուխատ:

Գաշնակցական զինված ուժերի հրամանատարությունը բոլոր միջոցներով ձևանարկեց՝ Կարմիր Բանակի զորամասերին դուրս մղելու հատկապես Լափանից և կասեցնելու ասաջխա-ղացումը զիսի Լափանի հանրերը:

Այդ նպատակով Նժդեհը Կարմիր Բանակի զեմ կենտրո-նացրեց թե՛ հետակային և թե՛ հենկուղարային ջոկատներ, նպատակ սնենալով լեռներում օդնւղացնել Կարմիր Բանակի

ասաջպահ ուժը: Սակայն Կարմիր Բանակը ձախողեց հակա-ռակորդի և այս ծրագրերը: Կարմիր Բանակը շարունակելով հարձակողական մարտերը, զբաղեց Լաթարի հանրերը, հետա-պնդելով զիսի լեռները նահանջող թշնամուն:

Կարմիր Բանակի սահաբաղացումը զիսի Լափան մեծ ովերություն ասաջ բերեց սեղի բնակչության մեջ: Ազատա-րությունն բնդրկեց Լափանի մի շարք գյուղերը: Այդ ժամա-նակ Լափանի կամուխատական կազմակերպությունները, որոնք զեկազմարում էին տեղական ղեկավարի աշխատանքնե-րը, Սովետական իշխանություն հաստատեցին Արծվանիկ, Նորաշենիկ, Շիկահող, Օխի և այլ գյուղերում: Այդ ժամին սժամունխաս թերթը դրել է Շիկահողում Սովետական իշ-խանություն հաստատելու և՛ Մոսկու (օգոստոսին) շրջակա Մա-րոշեն, Հանդ, Մավ, Կենանց, Շրջիբար, Մաղրա գյուղերը հա-մախոտականներով զինում են Շիկահող և իրենց գյուղերում էլ հաստատում Սովետական իշխանություն: 11-րդ Կարմիր Բանակի եղբայրական օգնությամբ, 1920 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին Զանգեզուրի զավառի մի շարք գյուղե-րում հաստատվեց Սովետական իշխանություն:

Տեղական կամուխատական բրիգեների ետանդուն տշխա-տանքի շեղահիվ քանի զեմում ավելի սերտ կապեր էին հաս-տատվում Զանգեզուրի զավառի գյուղացիության և Կարմիր Բանակի զորամասերի միջև:

Զանգեզուրի աշխատավորները համառանք ամբողջա-պես Սովետական իշխանության կողմն էր: Աշխատավորները բոլոր միջոցներով օգնեցին Կարմիր Բանակին՝ թշնամուն բախարհելու և վերջնական հաղթանակը ապահովելու համար: Զանգեզուրի պարտիական և սովետական կազմակեր-պությունների աշխատանքներին ակտիվ կերպով օգնեց Աղրը-րեջանի Կոմունիստական (բուլեղեկների) պարտիայի Կենտրո-նական Կոմիտեն:

Գավառի պարտիական կազմակերպությունները առույտ-ցիոն ակտիվ աշխատանք կազմակերպեցին շրավոր գյուղա-ցիները՝ աչն շրջաններում: Սախիում գաշնակներին օժան-գանիզ բազմաթիվ միջակ գյուղացիներ արդեն շրջվել էին

<sup>1</sup> Կոմունիստ, Բարս, 1920 թ., № 127:

դեպի Սովետական իշխանության կողմը և ամենուրեք օգնություն էին ցույց տալիս շատեր գյուղացիներին: Այդ պայթուած գյուղական սեւույուցիոն կոմիտեները հենվում էին շքավոր գյուղացիների վրա:

Ձանգեղուրի բոլշեիկների և տեղական սեկումների ամենակարեւոր խնդիրն էր՝ նյութական օգնություն կազմակերպել բանակին, մասնակարորէի հօսք և պարենային ապրանքներ, քանի որ Կարմիր Բանակի համար Սովետական Ռուսաստանից ուղարկված սննդամթերքների տեղափոխումը կապված էր մեծ զգվարությունների հետ: Լաշին արշակցություն ստանալով տեղական բնակչությունից, Ձանգեղուրի պարտական կազմակերպությունները աշխատավորներին նախապարաստեցին նոր մարտերի:

Դաշնակցական խմբապետական ուժերը խաչատուակ պարտություն կրելով Կափանում, բաշլեցին դեպի Մեղրու շրջանը և ամբողջան նուստովում:

Ստրանգիական շատ կարեւոր նշանակություն ունեցող այդ լեռնային գոտում էլ հենց ամբողջ էր Նոդհէր իր բանգիտական խմբերով: Դաշնակները 1920 թվականի սեպտեմբերի առաջին կեսերից սկսեցին մարտերը Կարմիր Բանակի դէմ: Տեղի ունեցած զգվարին մարտեր, որովհետև Գենվազի ուղղությամբ ընկած հարձակումը դրբերը գտնվում էին գաշնակների ձեռքում:

Դաշնակները ուղղական տեսակետից ունենալով որոշ առավելություններ (նրանք նախօրոք գրավել էին անտրիկ լեռնանցքները), հոսկարծակի հարձակում էին Կարմիր Բանակի զորամասերի վրա և մեծ վնաս պատճառում նրանց: Այս բոլորից հետո էլ կարմիր զորամասերը արիքարք դիմացան հակառակողի դրհներին: Հաղթահարելով մեծ զգվարություններ, նրանք հաջողությամբ եւ շարտեցին դաշնակներին և ամբացան կարեւոր դիրքերում: Կարմիր Բանակի և գաշնակների միջև համառ մարտեր տեղի ունեցան սեպտեմբեր ամսին: Դաշնակները Գենվազի շրջանում ձուռեցին ուղեւաջնել Կարմիր Բանակի կենդանի ուժը, գիմելով կալի ամենասար կղանակներին:

1 ՏՊ՝ ԱԴԱԿԱ, փ. 25845, օտ. 2. a. 156:

Կարմիր Բանակի առաջնագծումը կասեցնելու նպատակով՝ Նոդհէր դիմեց խարդախ միջոցի. մշակեց Կափանում հակասովետական, կոմորսուլյուցիոն խռովություն բարձրացնելու պլան: Դաշնակները նպատակ ունեին հիմնովին ուղեւաջնել սեւույուցիոն շարժումները, ձախողել կարմիր զորամասերի ապստաղրական արշավանքը դեպի Հայաստանի խորքերը: Դաշնակցականները սերտ կապերի մեջ լինելով Քավրիգի և Քեհրանի սեակցիոն տարրերի հետ, նրանցից օգնություն ստանալով, իրականացրին իրենց ստոր ղավերը՝ Կարմիր Բանակի Քեիտերում բարձրացրին կոմորսուլյուցիոն խռովություն:

Փշնամու ննդ սլանները կոմբինացված էին: Պարսկական ֆեոդալների արշակվաբար, մուսաովիստական տարրերը նույն ժամանակ հակասովետական խռովություն բարձրացրին նաև Անբրոսում՝ Նոդհէրին օգնելու նպատակով: 1920 թվականի հոկտեմբերի 14-ին Նոդհէրին Հաշոզից խարդախ ձանապարհով գրավել Սիսիտոնն ու Կափանը և գահան հաշվհհարգար ստննել ընտելություն հետ:

Չուսած որ 1920 թվականի հոկտեմբերն Անտանաի երկրների հիմնական ուժերը գլիտլին շախտովել էին Կարմիր Բանակի կողմից, սեզր-ամբերկյան իմպերիալիստները իրենց պլաններում կարեւոր տեղ էին հատկացրել Անդրկովկասին, նպատակ ունենալով Անդրկովկասը նվաճել և այն գարննել պայցզարմ Սովետական Ռուսաստանի դէմ պայքարելու համար:

Այդ իրականացնելու համար նրանք կանց շառան ոչ մի ստոր միջոցի առաջ նախ, փորձեցին սիրաշահել Քուրբային, որի համար փաստորին Հայաստանը զցեցին թուրքական իմպերիալիզմի ճիրանների տակ, բացի այդ, նրանք զորձաղրեցին բոլոր միջոցները Քուրբային Սովետական Ռուսաստանի դէմ կալի զորս հանելու համար: Անկասկած, Քուրբայի դիրքը այդ ժամանակ անդր-ամբերկյան իմպերիալիստների համար ուներ կարեւոր նշանակություն:

Սովետական Ռուսաստանը, բարեկալիլով իր հարաբերությունները Քուրբայի հետ, միամասնական ձգտում էր

1 ՏՊ՝ ԱԴԱԿԱ, փ. 25845, օտ. 2. a. 156:



նորմալացնել նաև Անդրկովկասի և Քուրդիստանի հարաբերությունները: Այս բոլորից հետո էլ գաշնակները լիախորեն զբոսարտում էին բուլղերիկներին՝ վայրահաշում էին այն մասին, որ իրր թն Սովետական Ռուսաստանը ազակցում է Քուրդիստանին՝ քնդղեմ հայ ժողովրդի: Միևնգեև, Սովետական Ռուսաստանը 1920 թվականի մայիսին զիմեց գործնական քայլերով՝ մենշևիկյան կառավարության և գաշնակների հետ իր հարաբերությունները բարելավելու համար:

Արքերշանը սովետական դառնալուց հետո գաշնակները և մենշևիկները ավելի կատաղի կերպով սկսեցին պայքարել անույուցիայի դեմ:

1920 թվականի մայիսի 2-ին մենշևիկների պարագլուխ Գեղեշկորին իր մի ձեռում լիախարսր առաց. «...Քող Մասիվաշում շմառծն թն Վրաստանն էլ նույնն է, ինչ Ագրքեշանը...», և կոչ էր անում լարել ուժերը կովկաս բուլղերիկների դեմ: Այս բոլորից հետո էլ Ռուսաստանը ձգտում էր բարեկամական հարաբերությունների մեջ մտնել Վրաստանի և Հայաստանի հետ, դուրս բերել այդ ժողովուրդներին անասնելի փրհակից:

Հյուսիսային Կովկասը Ռուսաստանի Կարմիր Բանակի կողմից ազատագրվելուց հետո, Սովետական Ռուսաստանի զինվանագիտական ներկայացուցիչը բազմիցս անգամ առաջարկեց կրկն պետությունների միջև բարեկամական փոխհարաբերություններ հաստատելու մասին: Ողջիս հիմք այդ փոխհարաբերությունների՝ Սովետական Ռուսաստանի ներկայացուցիչը հրչեցրեց Հայաստանի կառավարությանը (գաշնակերական) այն մասին, որ Սովետական կառավարությունը բազմիցս ճանաչել է Հայաստանի անկախությունը: Այդ բանի լավագույն հաստատումն էին հանդիսանում Սովետների II համագումարի որոշումները, ժողկոմսովետի նախագահ Վ. Ի. Լենինի ստորագրությամբ «Քուրդահայաստանի մասին» հայտնի ղեկերտը և այլն:

Հակառակ Սովետական Ռուսաստանի կառավարության, որը միշտ պատրաստ էր ճանաչել Հայաստանի անկախությունը և սուվերենությունը, գաշնակցական կառավարությունը

չէր հրաժարվում իր սոսնձություններից ու թշնամական վերաբերմունքից հայ կոմունիստների և 11-րդ բանակի հանդեպ:

Գաշնակները, շնասեմ նրան, որ բանակցությունների մեջ էին մտել Ռուսաստանի հետ, նրքեր չհրաժարվեցին իրենց նախկին թշնամական դիրքերից և բոլոր դեպքերում փորձեցին խարել պատվիրակությունը, շրդգունել ՌՄՖՍՌ-ի լիազոր ներկայացուցչի արդարադի ստաշարկները:

Հայաստանի դրությունը քանի ցունում ժանրանում էր 1920 թվականի մայիսի 10-ին, էրզրումի բանակի հրամանատար Կարաբեշիր փաշայի հրամանով թուրքական զորքը շարժվեց Օլթի, մեծ վրաս պատճառելով խաղաղ բնակչությանը: Այդ նույն ժամանակ էլ նախիրական և Գարաբաղի շրջաններում հայ ու պարքեշանցի ազգաբնակչության մեջ, գաշնակների և մուսավաթիստների դրամամբ, տեղի ունեցան ազգամիջյան կրիմներ ու խրտումներ: Ահա, որպեսզի այդ վիճակը վերանա, 1920 թվականի մայիսի ակտեներին 11-րդ Կարմիր Բանակի հրամանատարությունը նստուղ նուսալով Հայաստանի արտաքին գործերի նախարարից պահանջեց՝ գաշնակցական զորքը դուրս բերել Գարաբաղի և Զանգեզուրի տերիտորիաներից:

«Հայաստանի և մեր բարեկամ գաշնակից Սովետական Ագրքեշանի սահմաններում, — ասված է նոսալում, — շարունակվում են պատերազմական գործողությունների Հայաստանի և Ագրքեշանի միջև Սովետական Ռուսաստանի կառավարությունը իր սրբազան պարտք է համարում ամբողջ ուժով օգնության հասնել Ագրքեշանի բոլոր աշխատավորների անուհից իրեն դիմող Ագրքեշանի բանվորազուղազցիական կառավարությանը, հասաստել այնտեղ բանվորազուղազցիական իշխանությունը:

Ազգային սակուլության հողի վրա առաջ եկած պատերազմը Հայաստանի և Ագրքեշանի զորքերի միջև, որն ավելի է բռնկվում Անդլիայի և գաշնակցության ու մուսավաթ պարտիայի ազիտացիայով, ձեռնուու է միայն ճնշված ժողովուրդների շահագործողներին ու Հայաստանի աշխատավորների կեղծքիշներին: Սահմանային բոլոր վիճակը Հայաստանի և Ագրքեշանի միջև կարող են լուծվել միայն ինքնորոշված աշ-

<sup>1</sup> Տե՛ս «Բանվորի ձայն», 1920 թ., № 20.

խառավոր ազգայնականության կողմից: Սովետական Ազգայնականությանը չի կարող թույլ տալ ոչ մի շովինիստական, ազգայնական և ազգասիրական գործողություններ: Սովետական Ազգայնականություն միջցեղային ասեկություն այլևս չի կարող տեղի ունենալ:

ՌՍՖՍՌ-ի կառավարության անունից առաջարկվում է Հայաստանի կառավարությունը անմիջապես դադարեցնել պատերազմական գործողությունները Սովետական Ազգայնականության և դուրս բերել իր զորքերը նրա սահմաններից: Այդ պետք է կատարվի այս առաջարկությունը ընդունելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում<sup>1</sup>:

Այսպիսով, Սովետական Ռուսաստանը, 1920 թվականի մայիսից մինչև նույն թվականի հուլիսը, բազմաթիվ ետտաներով գաշնակցական կառավարությունից պահանջեց՝ պարզել իր դիրքը Ռուսաստանի նկատմամբ, որի համար առաջարկեց շտապփույթ կերպով սկսել բանակցությունները: 1920 թվականի հուլիսին Սովետական Ռուսաստանը Հայաստան ուղարկեց իր ներկայացուցչին՝ Բ. Լեզրանին: Սակայն բանակցությունները վերսկսելու և պայմանագիր կնքելու համար կային մեծ դժվարություններ: Դաշնակցական կառավարության պատվիրակությունը ամեն կերպ փորձում էր ձախողել բանակցությունները Ռուսաստանի հետ: Միայն երկար բանակցություններից հետո՝ 1920 թվականի օգոստոսի 10-ին հաջողվեց պայմանագիր կնքել<sup>2</sup>, որը, իհարկե, շուտով կորցրեց իր ուժը:

Այդ պայմանագրի համաձայն դաշնակցների և 11-րդ բանակի զորամասերի միջև դադարեցվում էին ռազմական գործողությունները նախալեռանի և Զանգեզուրի շրջաններում: Դաշնակցական կառավարությունը համաձայնվեց, որ Կարմիր Քանակը տեղափոխվի Հայաստանի և Ազրբեյջանի միջև եղած վիճելի տերիտորիայում՝ մինչև հարցի վերջնական լուծումը, իսկ ՌՍՖՍՌ-ն Շահախում—Ջուլֆա կրկաթուղայինը ձանաչում էր որպես Հայաստանին:

<sup>1</sup> «Բանվորի ձայն», 1920 թ., № 19:

<sup>2</sup> Տե՛ս ՄԲԿՊ Կենտրոնի կից Մարտիզմ-ևնրնիզմի Ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 64, գ. 11, ք. 10:



Ալ. Յ. Մյաննիկյան



Սովետական կառավարությունը բոլոր միջոցներով փորձում էր օգնել հայ ժողովրդին, զուրա բերել նրան կործանումից, խոտանալով անտեսական օգնություն<sup>1</sup>։ Այդ առթիվ Ս. Մ. Կիրովը 1920 թվականի օգոստոսի 20-ին Վ. Ի. Լենինին գրում է. «...Ի վերջո, կցանկանայի Ձեր ուշադրությունը հրավիրել այն հանդամների վրա, որ անհրաժեշտ է որքան կարելի է շուտ սրտել մեր վերաբերմունքը դեպի Հայաստանը։ Այս հարցը մեզ համար շատ մեծ նշանակություն ունի այստեղ։

Մահճեղական և հայկական մասսաների այն հույսը, թե Սովետական Ռուսաստանը վերջապես կլուծի նրանց համար սանջալի հարցերը, կարող է որոշակիորեն նրնալ։ Այդ բանը ես բազմիցս հաղորդել եմ Չիկրիինին, սակայն երևի Մոսկվայում հայկական գեկզացիայի հետ մեր վարած բանակցություններից առայժմ բան դուրս չի գալ։

Այնուամենայնիվ հարկավոր է հարցը մի կերպ լուծելն<sup>2</sup>։ Այսպիսով, Սովետական Ռուսաստանի արտաքին քաղաքականության նպատակն էր՝ բարելավել հարաբերությունները Մերձավոր Արևելքի երկրների հետ, զուրա բերել այդ ժողովուրդներին Անտանտի պետությունների ձանկերից։

Սովետական Ռուսաստանը Քուրբիայի կառավարությանը տված իր մի շարք նոտաներում պարզ ու սրտչակի կերպով ցույց տվեց, որ ինքը զործնականում հանդես է գալիս Անգրկովկասի՝ ճեշված ժողովուրդների լավագույն բարեկամի գերում։

1920 թվականի ապսեմբերին օտարերկրյա պետությունների զրգմամբ դաշնակցական Հայաստանի և Քուրբիայի միջև ծագեց մի արշունալի պատերազմ, որը հայ ժողովրդի պատմության ամենադրբադական էջերից էր։ Մինչև ատամները զինված Քուրբիան բունակները նպատակ ունեին գալթիլ ամբողջ Անգրկովկասը, բնացնել հայ ժողովրդին, ոչնչացնել ռեյուցիոն շարժումները։ Հայաստանի համար ստեղծված այս ծանր պահին կրկին օգնության ձեռք մեկնեց Սովետական Ռուսաստանը։ Դեռ պատերազմը չսկսված՝ Սովետական կառավարությունը 1920 թվականի հունիսին հայտ-

<sup>1</sup> ՅՆ՝ՈՒՄՔԱԿԱ, փ. 195, օր. 8, ձ 19։

<sup>2</sup> «Սովետական Հայաստան», 1940 թ., № 280։

ննց գաշնակցական կառավարությանը այն մասին, որ ինքը հանդես է գալիս բարձր ճնշված ժողովուրդների ազատարարի գերում, առաջարկելով «խաղաղ կերպով լուծել հայ-առնակական վեճը»<sup>1</sup>:

Գաշնակցական կառավարությունը, որը բարձրովին հոգ չէր տանում հայ ժողովրդի մասին, կատարելով օտարերկրյա պետությունների կամքը, մերժեց Ռուսաստանի միջնորդությունը և շարունակեց պատերազմը: 1920 թվականի հոկտեմբերի 5-ին և ապա նոյեմբերի 12-ին Չլիբակերին հատուկ հուշագրով առաջարկեց գաշնակցական կառավարությանը՝ դադարեցնել ազգական գործողությունները Քուրբանյի հեռ և բանակցություններ սկսել՝ մինչև ի հարցերը լուծելու համար: Մակբաչ գաշնակցները չլսեցին, շարունակեցին պատերազմը: Նույն թվականի սեպտեմբերին թուրքական բանակը գրավեց Սարիզամիջը, հոկտեմբերի 7-ին՝ Կարսը, նոյեմբերի 5-ին՝ Ալեքսանդրապոլը (այժմ՝ Անիեական):

Գրաված վայրերի բնակչության զգալի մասին քեմալական զինվորները առանց խզնի խայթի դազանային կերպով հռչակեցին: Թուրքական զինվորները թալանեցին բնակիչներին և ավարը ուղարկեցին Քուրբան: Հայ ժողովուրդը կանգնած էր անդուճակի եզրին, սիրելիսյան միակ հուշը Հայաստանում Սովետական իշխանություն հաստատելն էր:

ՌՄՖՍՌ-ի կառավարությանը մշտապես զբաղեցնում էր հայ ժողովրդին օգնություն ցույց տալու հարցը: Նոյեմբերի 20-ին ՌՄՖՍՌ-ի արատարին գործերի կոմիտեար Չլիբերինը հատուկ նոտայով Քուրբանյան կառավարությունից պահանջեց գտարկեցնել պատերազմը և վերջ ապա՝ հայ ժողովրդի նկատմամբ կատարվող զազանությունները<sup>2</sup>:

Քեմալական զինվորների զազանությունների առթիվ իր բողոքը հայտնեց 11-րդ բանակի հրամանատարությունը: 1920 թվականի վերջին Ս. Օրոնիկիձեն Կովկասյան Տակառի Ռազմա-ուսույուցիտն խորհրդի անդամ Տրիֆոնովին գրում էր հետևյալը. «Հայաստանի վրա Քեմալի հրաձակման կապակ-

ցությունը ամենից հավանականն այն է, որ Սովետական Ռուսաստանը կմիջնորդի՝ Հայաստանը սրբիկելու համար»<sup>3</sup>:

Միջազգային իմպերիալիզմի խարուսիկ զիվանագիտությունը և գաշնակցական կառավարության վարած սխալ քաղաքականությունը հայ ժողովրդին պատճառեցին վիթխարի վնաս: Հայաստանը կորցրեց իր տերիտորիայի զգալի մասը, տալով մարդկային և նյութական մեծ կորուստներ:

Անտանտի պետությունները հրաժարվեցին օգնել գաշնակցական կառավարությանը, Հայաստանը թողնելով Քուրբանյի հռչակումներ:

Պատերազմի սկզբից գաշնակցական բանակի շարքերում նկատվեց հուսալքություն, զինվորների մեծ մասը լքում էր ռազմաճակատն և հեռանում: Հաշվի առնելով իր մոտալուս կործանումը, գաշնակցական բանակի ղեկավար հրամանատարությունը ստիպված էր Քուրբանյան հարսուխյուն առաջարկել: Բանակցությունների ընթացքում Քուրբան գաշնակցներին ներկայացրեց այնպիսի պայմաններ, որոնց համաձայն Հայաստանը զսոճում էր թուրքական իմպերիալիզմից լրիվ շափով կախված մի նահանգ:

Քուրբանյի կողմից առաջարկված պայմաններն անընդունելի էին, որովհետև հակասում էին ոչ միայն հայ, այլև Անգլոկովկասի մյուս ժողովուրդների շահերին:

Սովետական Ռուսաստանը վճռականորեն բողոքեց Քուրբանյի կողմից առաջարկած հարսուխյուն պայմանագրի հոգովածները զեմ, զգուշացրեց գաշնակցական հրամանատարությանը այդ պայմանագրի վտանգավոր էությունը մասին և խորհուրդ տվեց շնջուճել:

Այդ առթիվ ՌՄՖՍՌ-ի լիազոր ներկայացուցիչ Բ. Անգաբը գալուսթյանով գրում էր. «Ընդունելով Քուրբանյի դաժան պայմանագիրը, զրանով ռուս զրկում եք Հայաստանը իր ինքնուրույն գոյությունից, ամբողջովին երկիրը ծախում եք Քուրբանյին, հայ ժողովրդին ենթարկում կործանման և թուրքական սրի հարվածներին, և դառնում Սովետական Ռուսաստանի զեմ կաղմակերպված արշավանքների օղակներից մեկը:

<sup>1</sup> Ա. Կարինյան, Իմպերիալիստական պատերազմը և Հայաստանը, Սրեան, 1924, էջ 31:

<sup>2</sup> Տե՛ս ՀՄՍՌ ԿԳՊԱ, ֆ. 114, ց. 229, թ. 15:

<sup>3</sup> Մ. Աղաջան, Հոկտեմբերյան սեպտյուբրան և հայ ժողովրդի սպասուգրությունը, Սրեան, էջ 297:



Սովետական Ռուսաստանը պատրաստ է օգնելու Հայաստանին՝ անկախությունը պահպանելու Ձեր նրկրին օգնության կուղարկվի Կարմիր Բանակը և Հայաստանից դուրս կմղվեն թուրքական և այլ օտարերկրյա զավթիչները... Բանի ուշ է, մտածեցեք լրջորեն և պատասխանեցեք անմիջապես՝:

Սակայն դաշնակները ինչպես միշտ, այս անգամ ես դավաճանեցին հայ ժողովրդին. լինելով Սովետական Ռուսաստանի կատաղի թշնամի, մերթեցին Լեզրանի առաջարկը և բնորոնեցին Ռուրջիայի ստրկացույցը պայմանները:

1920 թվականի դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում թուրքական խմբերիայից՝ իր կամքով թեկադրեց դաշնակների սարկն պարտված կառավարությանը: Ալեքսանդրապոլում կնքվեց մի խաչատուակ պայմանագիր, որի համաձայն Հայաստանը Քուրդիայի ձեռքին գտնուով էր խաղալիք: Ավելի ուշ, Սովետական Ռուսաստանի և Հայկական ՍՄԽ կառավարության միջամտությամբ, մոսկովյան պայմանագրով, այդ պայմանագիրը հայտարարվեց չեղյալ:

Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ 1920 թվականի աշնանը Հայաստանի աշխատավորների պայքարը Սովետական իշխանության հաստատման համար ստացավ նոր թափ:

Հայաստանի համարյա բոլոր շրջաններում անդի ունեցան հակադաշնակցական կոլյմեր ու ցույցեր: Աշխատավոր ժողովուրդը ստեղծված վիճակից ցանկանում էր դուրս գալ սեկյուցիոն ճանապարհով:

Հայաստանի աշխատավորների որոշ մասը, որը Մայիսյան ապստամբությունից հետո գնացել էր Սովետական Ադրբեջան, 1920 թվականի աշնանը վերադարձավ Հայաստան և ակտիվ դեր խաղաց դիմված ապստամբության մեջ, 1920 թվականի հոկտեմբեր-նոյեմբերին դաշնակցական կառավարության դեմ պայքարը ավելի կատաղի և սուր բնույթ ստացավ Չանգեզուրում: Այդ ժամանակ Հայաստանի հարավային

շրջաններում (Գորիս, Սիսիան, Ղափան) կոմունիստական կազմակերպությունների զլխավորությամբ կազմակերպվեցին պարտիզանական ջոկատներ, որոնք մեծ օգնություն ցույց տվին հայ ժողովրդի ազատագրման համար մարտնչող Կարմիր Բանակի զորամասերին:

Գաշնակցական դիմված ուժերի գլխավոր հրամանատարությունը 1920 թվականի օգոստոսին բազմականին մեծ թվով զորամասեր կենտրոնացրեց Լարսարսղում և Նախիջևանում կանգնած Կարմիր Բանակի զեմ: Այդ ժամանակ Հայաստանի ազգա-բաղաբական վիճակը ներկայացնում էր հետևյալ պատկերը. երկրի թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության ընադավառում ավելի նկատելի էին զարձկ դաշնակցական կառավարության ազգամտեղ ձգտումները: Այդ բանը ավելի նկատելի դարձավ, հատկապես Զանգեզուրում և Զանգիրասարում, Բենյուկ-Վեդիի և Եաճճասի շրջաններում ապստամբ գյուղացիների նկատմամբ կիրառվող սեղաներաներից հետո: Սեպտեմբերից Գրայի կողմից ավելի ուժեղացան տեղական բնակչության, մանավանդ կոմունիստների նկատմամբ, որը Կարմիր Բանակը 1920 թվականի հոկտեմբերին շարժվեց Գորիս ուղղությամբ: Գեղի բոշեից՝ թեկուզ և փոքր շափով որևէ արամաբություններ հայտարարելու զեպրում բոլոր քաղաքացիները պատժվում էին զաժանորեն, բնդհույ մինչև գնգախհաբուբյուն:

Զանգեզուրի շրջանի մի շարք գյուղերում սեկյուցիոն շարժումները լիկվիացնելու դրոժը գաշնակցական հրամանատարությունը հանձնարարել էր գեներալ Ենիկովիկովին, իսկ Օլիխ—Աարիզամիշ—Կազղվան ուղղությամբ դասավորված զորամասերի ղեկավարությունը տրված էր առաջին բրիգադի հրամանատար, գեներալ Լուսինյանին: Իրր թե Սովետական Ադրբեջանի կողմից սպանանցող վտանգից հարկազրկված դաշնակցական հրամանատարությունը մեծ ուժեր կ'ենտրոնացրել Լարսարսղի ուղղությամբ, իսկ Գրիլիանի շրջանում դասավորված զինված ուժերի հրամանատարությունը հանձնված էր գեներալ Սիլիկովին: Աշխատավոր մասաների տրամադրությունները որոշակիորեն Սովետական իշխա-

1 ՀՍՍՌ ԿԳԳԱ, ֆ. 4/114, ք. 54, ք. 4:

1 Տե՛ս ПГАКА, ֆ. 165, օր. 4, ձ. 41, 2. 5:





Դաշնակցական զինված ուժերի թիվը Հանգեղուրում կազմում էր շուրջ 2500 մարդ<sup>1</sup>։

Զինվորների զգալի մասը չէր ցանկանում կռիվ կարմիր Բանակի դորամասերի դեմ։ Այդ օրերին 11-րդ բանակի զորամասերի մասին դաշնակ լրտեսները զինվորների, զյուզայիթյան մեջ տարածել էին սուս լուրեր, որ իրք թև բուշեկները զենքով ու միներենքով օգնում են Քուրբխային՝ ընդդեմ հայ ժողովրդի։ Դաշնակ ազդեցությունները գյուղացիությանը փորձում էին շեղել սեռյուզային պայքարի ճանապարհից, նրանց պատերազմի կող անելով ինչպես բուշեկների, նույնպես և Քուրբխայի դեմ։ Գրա համար նրանք սասց զաշեցին սամեն ինչ սպազմահատի համար՝ լոպունգը<sup>2</sup>։

Հոկտեմբերին դաշնակցական հրամանատարությունը մեծ ուժեր կենտրոնացնելով՝ Ղաթարի մաս, գործադրեց բոլոր շահերը, որպիսիք գրավի հանքերը և ամրանա Ղարաբիխա ու Ենգիջա բնագծերում։ Հոկտեմբերի 25-ին թշամին գրավեց Ղարաբիխա, Ենգիջա գյուղերը և դուրս եկավ Ուշ-Յափա լեռնաշղթայի ձախ թևը և Ուշ-Յափա սարը սանող դիրքային գիծը։ 11-րդ բանակի շտաբը 1920 թվականի հոկտեմբերի 27-ին զանգեղուրյան զորքի հարվածային խմբին հրամայեց՝

ա) 1-ին հարվածային խմբի 28-րդ հրաձիգ զիվիդիային (զիվիդիայի հրամանատար Ենսարովսկի), 83 և 84-րդ հրաձիգ բրիգադաներին, թևին մարտիցի պատակին, լեռնահեծյալ մարտիցի զորամասերին՝ մինչև հոկտեմբերի 31-ը հարվածային զորասյունը կենտրոնացնել Շահվիդար գյուղում, լուսարացին հարձակվել և գրավել Ղաթարի հանքերը։

բ) 2-րդ հարվածային շարասյան զորքերին՝ 1-ին հեծյալ բրիգադին, 18-րդ հեծյալ զիվիդիային, 103 և 105-րդ հեծյալ զնդերին, 28-րդ հրաձիգ զիվիդիային և լեռնահեծյալ զամարատակին՝ մինչև հոկտեմբերի 31-ի երեկս կենտրոնացնել բրիգադի զորամասերը Յալչի գյուղի շրջանում, նույնների 1-ի լուսարացին գրավել Աերին կոտանան գյուղի ու Խաշին կոպ լեռնագագաթը...<sup>3</sup>։



Է. Կ. Բագրատյան

<sup>1</sup> ՏՆ՝Ո ԱԴԱԿԱ, ֆ. 195, օտ. 3, ձ. 515, ա. 19.

<sup>2</sup> ՏՆ՝Ո Կուրս տեղեր

<sup>3</sup> ՏՆ՝Ո ԱԴԱԿԱ, ֆ. 326, օտ. 1, ձ. 2, ա. 5.

11-րդ բանակի վերոհիշյալ զորամասերը հեղտմբերի վերջերից մարտերի մեջ մտան դաշնակցական գինված ուժերի գեժ: Դաշնակները բազմական մեծ ուժ ունեին Յալչի գյուղում: Այդ ուղղությամբ տեղի ունեցան համառ մարտեր: Կարմիր Բանակին հրամայված էր՝ առաջընթացի ժամանակ անխնայ կերպով ոչնչացնել դաշնակցական բանդիտներին, օգնել խաղաղ բնակչությանը, ոչինչ չվերցնել նրանց գույքից:

Գաշնակների դեմ մղվող մարտերում Կարմիր Բանակի զորամասերը խոշոր աչակցություն ստացան տեղի բնակչության և կոմունիստական չոկատների կողմից: Եարունակելով առաջխաղացումը, հեղտմբերի 27-ին 18-րդ հեծյալ դիվիզիայի 103 և 105-րդ զնդերը դուրս եկան Սիլվուկ, Քեշիշ-բենդ գյուղերի շրջանից, տեղավորվեցին Կալասար կոչված լեռակալալարում: Առաջին հեծյալ զուամբուսկը, որն իր կազմում ուներ շորս քնդանոթ, տեղավորվեց Եուշաբենդում:

Հեղտմբերի 31-ին 18-րդ դիվիզիայի առաջին բրիգադի 103 և 105-րդ զնդերը, գուրս գալով Գորիսից, շարժվեցին դեպի Յալչի—Սյուրուտլար ուղղությամբ, իսկ 18-րդ հեծյալ բրիգադն անցավ Ուշ-Յալփա բարձունքը և միացավ Թուրքական կարմիր զնդին:

Ջանգեղուքյան խմբի զորքերին հրամայված էր մինչև նույնների վերջը ազատագրել Զեյվա և Եահվեղար գյուղերը<sup>2</sup>:

Կարմիր Բանակի զորամասերը (83-րդ և 84-րդ բրիգադները) հաղթահարելով մեծ զոժարություններ, ետ մղեցին թշնամու գրոհները և մինչև հեղտմբերի 4-ը գրավեցին Արծվանիկ գյուղն ու տեղավորվեցին այնտեղ: 250 և 252-րդ զնդերը տեղավորվեցին Արծվանիկի հյուսիս-արևելյան մասում, իսկ 240-րդ զունդը՝ 5222 բարձրություն լանջերում: Նույն ժամանակ 251 և 253-րդ զնդերը առաջադրանք էին ըստացել մինչև նոյեմբերի 6-ը գրավել Ղաթարը, իսկ 248-րդ

<sup>1</sup> Տե՛ս ԱՂԱԿԱ, ֆ. 826, on. 1, թ. 2, ռ. 5:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, գ. 7, թ. 4:



գունը պետք է թշնամուն եւ շարտեր Անտրի ուղղութիւնք  
և գրովը Մշակակալաւ ու Մեքար գլուխըրը<sup>1</sup>:

Գաշնակները այդ ուսումնականում կենտրոնացրել էին  
իրենց լավագույն զորամասերը՝ նրանք հռեկարծակի հար-  
ձակվեցին Կարմիր Բանակի վրա և զբաղվեցին Չափնի, Ջելվա  
և Արծվանիկ գլուխըրը Թշնամուց անկետս լինելու համար  
ՅՃ-րդ բրիգադի զորամասերին հրամայվեց՝ բաշխել Գորիսի  
կողմը և բանել պաշտպանողական դիրք՝ Բազարաշի ափե-  
րում:

Արծվանիկ—Չափնի ուղղութիւնք զործող կարմիր զորա-  
մասերի ժամանակավոր անհաջողութիւն պատճառը հետե-  
ւալն էր. զորքերի կերկրող խումբը, որին հրամայված էր ա-  
ռաջ շարժվել դեպի Բազարաշի ուղղութիւնք, զանգաղեցրեց  
իր առաջխաղացումը, զրանով իսկ հակառակորդին հնարա-  
չորութիւն ալից նստանանի շրջանում կենտրոնացնել իր  
լավագույն զորամասերը և թեկերից հարվածը Կարմիր Բա-  
նակին: Անհաջողութիւն պատճառները մշտն էլ այն էր, որ  
ՅԾ-րդ դիվիզիան կուլի մշտական պահին լիարդուցով օգնու-  
թիւն հասնել 84-րդ բրիգադին: Ենդե՛հի հրամանատարու-  
թիւնք զործող զորամասերը օգտվելով զրանից, ձախտային  
զրո՛հ սկսեցին Կարմիր Բանակի գիրքերի վրա: Բացի այդ  
